ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2020 թվականի թիվ 234 - Ա

ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով՝

որոշում եմ.

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ մարտական գործողությունների հետևանքով Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանի բնակչությանը պատճառված վնասների գույքագրման և գնահատման նպատակով հետևյալ կազմով.

աշխատանքային խմբի ղեկավար՝
Տիգրան Մուշեղյան - մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար,
անդամներ՝
Միսակ Մելքումյան - մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ,
Ռուբեն Պետրոսյան- մարզպետարանի քաղաքաշինության վարչության ավագ մասնագետ,
Վահրամ Սուքիասյան-քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Տավուշի տարածքային բաժնի ներկայացուցիչ,
Սամվել Հովսեփյան - Բերդ համայնքի ղեկավարի տեղակալ, համապատասխան բնակավայրի վարչական ղեկավար կամ համապատասխան բնակավայրի Բերդ համայնքի ավագանու անդամ, համապատասխան բնակավայրի ՔՊ հենակետի ներկայացուցիչ:

2. Անհրաժեշտության դեպքում աշխատանքներին ներգրավել այլ պաշտոնատար անձանց:
3. Աշխատանքային խմբին՝ առաջնային գնահատում իրականացնել արձանագրված դեպքերից հետո 24 ժամվա ընթացքում, և տեղեկատվությունը թարմացնել 24 ժամը մեկ:

Հ. ՉՈԲԱՆՅԱՆ
16.07.2020

X

2020թ. հուլիսի 16
ք. Իջևան